

Եւ վերջապէս, գերման փիլիսոփայ **Նիցշէ** (Friedrich Nietzsche, 1844 – 1900 թ.) կը ներկայացնէ Հնադարեան ժամանակներէն ի վեր արդէն ծանօթ *բարոյականութեան քննադատութիւնը*:

Բարոյագիտական տեսութիւններու այլ դասաւորում մը, առանց նկատի առնելու Նիցշէի բարոյականութեան քննադատութիւնը, միայն երկու գլխաւոր խումբեր նկատի կ'ունենայ.-

1. Նպատակաբանական բարոյագիտութիւնը,

որ կ'ընդգրկէ վերոյիշեալ առաջին երկու տեսութիւնները (Արիստոտելի երջանկապաշտականն ու Բենթամի օգտապաշտականը) եւ

2. Պարտագիտական բարոյագիտութիւնը,

որ կ'ընդգրկէ Կանտի ինքնօրինութեան կամ «պարտագիտական տեսութիւնը»: Պարտագիտական հիմք ունին նաեւ Նոր Դարաշրջանին մշակուած «Պայմանագրային տեսութիւնը» (Social Contract, Contractarianism, գերմ.՝ Vertragstheorie, տե՛ս Էջ 150) եւ 20-րդ դարուն մշակուած «Քննախօսութեան բարոյագիտութիւնը» (Discourse Ethics, տե՛ս Էջ 218):

Բարոյագիտութեան տեսութիւններու գրեթէ մեծամասնութիւնը, բարոյական արժեւորման որպէս ելակէտ կ'ընդունի հետեւեալ չորս երեւոյթները.-

Ա. մարդկային վարմունքները,

Բ. այդ վարմունքներու հետեւանքները,

Գ. այդ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի նկարագիրը եւ

Դ. այդ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի զգացումները:

Եթէ նկատի ունենանք բարոյական արժեւորումի վերաբերումը՝ վերոյիշեալ չորս երեւոյթներուն հանդէպ, այն ատեն կը բացայայտուի բարոյագիտութեան գլխաւոր տեսութիւններու յստակ զանազանութիւնը, բաժնուած հետեւեալ չորս խումբերուն.-

1. Պարտագիտական Բարոյագիտութիւն Էջ 160

(Deontological Ethics / սկզբունքային բարոյագիտութիւն),

որ բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատուին՝ մարդկային վարմունքները:

2. Նպատակաբանական Բարոյագիտութիւն Էջ 180

(Teleological Ethics / հետեւանքային բարոյագիտութիւն – Consequentialism),

որ բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատուին՝ վերոյիշեալ վարմունքներու հետեւանքները:

3. Առաքինութեան բարոյագիտութիւն Էջ 193

(Virtue Ethics),

որ բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատուի՝ վերոյիշեալ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի նկարագիրը: